

## Հարց

Ինչպե՞ս է իրականացվում ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման կարգը, եթե ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների թվաքանակը սահմանափակ է:

## Պատասխան

Եթե ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության թվաքանակը սահմանափակ է ռադիոհաճախականությունների առկայության պատճառով՝ ապա Կարգավորողը նմանօրինակ թույլտվությունները տրամադրում է մրցութային դիմումների կամ աճուրդի միջոցով:

Լիցենզիաների և ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների համար դիմումները պետք է Կարգավորողին ներկայացվեն այդ մարմնի սահմանած ձևով, պարունակեն «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն պահանջվող տեղեկությունները և Կարգավորողի կանոններով պահանջվող այլ անհրաժեշտ տեղեկություններ և պետք է ուղեկցվեն դիմելու համար սահմանված վճարով: Դիմումում ներառված տեղեկությունները պետք է հասանելի լինեն հանրությանը: Եթե դիմողը միջնորդում է Կարգավորողին և հիմնավորում, որ իրապարակման ենթակա որոշակի տեղեկություններ կազմում են առևտրային գաղտնիք, և Կարգավորողն այդ փաստարկները համարում է հիմնավոր, ապա նման տեղեկությունները իրապարակման ենթակա չեն: Եթե ռադիոհաճախականության օգտագործման թույլտվությունները կամ այլ լիցենզիաներ տրվում են աճուրդի միջոցով, ապա Կարգավորողը կարող է պահանջել, որպեսզի դիմողները ներկայացնեն Կարգավորողի կողմից սահմանված ձևի պարտավորագրեր, որոնք կերաշխավորեն նրանց կողմից վճարման համապատասխան պարտավորությունների կատարումը: